ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

23 սեպտեմբերի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

132
(2798)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ «ՍՐՏԻ ԴԱՏԱՎՈՐԸ»

Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Կարեն Ֆարխոյանը այն դատավորն է, որը հանուն Արցախի պայքարող եւ անհնազանդություններ իրականացնող ցուցարարներին կալանավորելու որոշում է կայացրել: Ընդ որում՝ երիտասարդը արցախցի է, նրա ընտանիքը Ստեփանակերտում անվտանգ գոյության պայքար է մղում: Իսկ ո՞վ է դատավոր Ֆարխոյանը: Նա պաշտոնի նշանակվել է 2018 թվականի հունվարի 25-ին՝ այն նույն տարում, երբ հայրենիք հանձնող իշխանությունները եկան թատերաբեմ: Ի դեպ, նա միշտ աչքի է ընկել իշխանությունների «սրտի որոշումներ» կայացնելով: Նա այն դատավորն է, որ կալանավորելու որոշում է կայացրել ԳՇ պետի տեղակալ Ստեփան Գալստյանին, ԱԺ աշխատակազմի ղեկավարի նախկին տեղակալ Արսեն Բաբայանին: Ֆարխոյանը հայտարարագրել է մեկ բնակարան Երեւանի Արաբկիր վարչական շրջանում, որը ձեռք է բերել 1991 թվականին: Դատավորի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 245 հազար 359 դրամ, կանխիկ դրամական միջոցները կազմել են 8 մլն 500 հազար դրամ: Նրա՝ հաշվետու տարվա եկամուտները կազմել են 18 մլն 126 հազար դրամ, որից 13 մլն 126 հազարը աշխատանքի վարձատրություն է ՀՀ ԲԴԽ աշխատակազմի դատական դեպարտամենտից, իսկ եկամտի մյուս մասը վարկ է: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը սեպտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 7 մլն 461 հազար դրամ: Նկատենք, որ Ֆարխոյանի եղբայրը՝ Ջոն Ֆարխոյանը, անցնում էր 2020թ. փետրվարին առանձնապես խոշոր չափի կաշառք ստանալու մեղադրանքով, Քաղաքաշինության կոմիտեի նախկին նախագահ Վահագն Վերմիշյանի հետ նույն գործով, սակայն ազատ արձակվեց գրավի դիմաց: Դեռ պարզաբանման է ենթակա նաեւ հենց դատավորի հայտարարագրած ու գուցե չհայտարարագրած կարողությունը:

ՀՀ կառավարության անդամները երեկ՝ նիստի մեկնարկին, հոտնկայս էին «մեծարգո վարչապետին» դիմավորելիս, սակայն զոհերի հիշատակը նույնքան կազմակերպված չհարգեցին: «Ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ նիստի մեկնարկին այդպես էլ նրանք ոտքի չկանգնեցին ու մեկ որոպե լռությամբ չհարգեցին ադրբեջանական ռազմական ագրեսիայի հետեւանքով զոհված արցախցիների հիշատակը. մի երեւույթ, որ կարելի է «անախադեպ» համարել: Ո՛չ Նիկոլ Փաշինյանը, ո՛չ նրա կառավարության անդամներից որեւէ մեկը չցավակցեց արյունահեղությանը զոհ գնացած արցախցիներին, կարծես ոչինչ չէր եղել: Ու եթե չլիներ Փաշինյանի կարճ ներածական խոսքը, իրականում՝ ազդարարումը, թե ՀՀ դեմ հիբրիդային քարոզչական պատերազմ է սկսվել, իսկ Արցախում մնացած քաղաքացիական անձանց կյանքին վտանգ չի սպառնում, ապա սուբսիդիոն ծրագրերով վերանորոգվող փողոցների շարքի թվարկումից չէիր ասի, թե ինչ իրավիճակում է այսօր Հայաստանը, ինչ իրավիճակում է Արցախը:

Վերջերս «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ներսում քննարկվում է ներքին անարդարության հարցը, թե ինչպես են բաշխվում գործուղումները, որ Լուսինե Բաղալյանը եւ Նարեկ Ջեյնալյանը դառնում են արտոնյալներ: Նրանք գրեթե ամեն տեղ միասին են մեկնում: Տեղեկացնենք, որ վերջին գործուղումը սեպտեմբերի 19-25-ն էր, որի մասով որոշումը կայացվել էր օգոստոսի 28-ին: Հայտնի զույգը եւ իրավաբանության հետ կապ չունեցող ԱԺ պետահրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Արփի Դավոյանը գործուղման էին գնացել Նյու Յորք եւ մասնակցում էին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստին: Տարօրինակը այս մասնակցության այն է, որ պատգամավորներից որեւէ մեկը արտաքին հարաբերությունների հետ կապ չունի. եւ՛ Լուսինե Բաղալյանը, եւ՛ Նարեկ Ջեյնալյանը Առողջապահության հանձնաժողովի անդամներ են, իսկ Լուլուի ընկերուհի Արփին, ինչպես նշեցինք, Պետահրավական հանձնաժողովի անդամ է: Զարմանալի է, որ որեւէ կապ չունենալով արտաքին կամ անվտանգության ոլորտի հետ՝ որպես պատվիրակություն գործուղվել են ԱՄՆ՝ ՄԱԿ ԱԽ նիստին մասնակցելու: Ընդ որում՝ նրանցից որեւէ մեկը պատշաճ մակարդակի անգլերեն չգիտի անգամ, եւ հասկանալի է, որ բյուջեի հաշվին շրջագայության էին մեկնել:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ երրորդ նախագահի անվտանգության նախկին պետ Վաչագան Ղազարյանը մի քանի օրից ԱԱԾ մեկուսարանից ազատ կարձակվի: Նրան կալանավորել էին ՊՆ հողատարածքների ապօրինի վաճառքի գործով: Ըստ էության, պարզ է, թե որն է Վաչագան Ղազարյանի ազատության գինը: Այս տարվա օգոստոսի 31-ին դատախազությունը հայտնեց, որ «Եռաբլուր» պանթեոնի 4 միավոր հողատարածքները վերադարձրեց Հայաստանի Հանրապետությանը: «Գլխավոր դատախազության մասնակի հաշտության համաձայնությունը հաստատվեց դատարանի կողմից: 2020 թվականի հոկտեմբերի 20-ին Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում սկսվել էր ՀՀ երրորդ նախագահի անվտանգության նախկին պետ Վաչագան Ղազարյանի եւ նրան փոխկապակցված անձանց պատկանող գույքի վերաբերյալ ուսումնասիրությունը: Կատարված ուսումնասիրության արդյունքում Գլխավոր դատախազությունը 2022 թվականի մայիսի 31-ին Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան էր ներկայացրել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցադիմում՝ պահանջելով Վաչագան Ղազարյանից եւ նրան փոխկապակցված անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել օրինական եկամուտներով չհիմնավորվող շուրջ 1 մլրդ 647 մլն դրամ եւ 7 մլրդ դրամ շուկայական արժեքով գույք: 2023 թվականի օգոստոսի 22-ին Վաչագան Ղազարյանի եւ նրան փոխկապակցված անձանց կողմից Գլխավոր դատախազություն էր ներկայացվել հայցապահանջը մասնակի ընդունելու եւ հայցապահանջում ներառված՝ «Եռաբլուր» զինվորական պանթեոնի 4 միավոր անշարժ գույքերը Հայաստանի Հանրապետության սեփականությանը փոխանցելու վերաբերյալ դիմում: Դիմումի հիման վրա՝ ՀՀ գլխավոր դատախազության եւ դիմում ներկայացրած անձանց միջեւ 2023 թվականի օգոստոսի 22-ին կնքվել է հաշտության համաձայնություն, որը նույն օրը ներկայացվել է Հակակոռուպցիոն դատարան՝ օրենքով սահմանված կարգով հաստատելու նպատակով:



ԶՐՈՒՅՑ

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝ ԵՎԼԱԽԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Երեկ Եվլախում տեղի ունեցավ Արցախի եւ Ադրբեջանի ներկայացուցիչների հանդիպումը: «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Արցախի արտաքին գործերի նախկին նախարար Դավիթ Բաբայանի հետ:

-Պարոն Բաբայան, երեկ Եվլախում տեղի ունեցավ Արցախի եւ Ադրբեջանի ներկայացուցիչների հանդիպումը: Ինչպե՞ս են ընթացել այս բանակցությունները, ի՞նչ պայմանավորվածություններ են ձեռք բերել կողմերը:

Բանակցությունները դեռ կշարունակվեն: Ամենակարեւորը՝ ընդգծվել է, որ խաղաղ պայմաններում դրանք պետք է ընթանան: Այսինքն՝ պետք է պատերազմական գործողություններից զերծ մնան, տեսնենք՝ ստացվում է այդպես, թե ոչ:

-Ընդհանուր առմամբ արդյունավետ կգնահատե՞ք այդ բանակցությունները:

-Արդյունավետ էր, թե անարդյունավետ, դա ցույց կտա ժամանակը: Պետք է տեսնենք, թե ինչ արդյունքների է հանդիպումը բերում, նոր հասկանանք՝ արդյունավետ էին դրանք, թե ոչ:

-Իսկ օր որոշվա՞ծ է՝ երբ պետք է շարունակվեն բանակցությունները:

-Դեռ ոչ:

-Պարոն Բաբայան, Ստեփանակերտում մնացած բնակիչներն ի՞նչ վիճակում են հիմա: Նրանց մի մասը Ստեփանակերտի օդանավակայանի տարածքում է հավաքվել, առանց սննդի, ջրի. ի՞նչ է կատարվում այդտեղ:

-Մարդկանց մի մասը հավաքվել է Ստեփանակերտի օդանավակայանի տարածքում, բաց հո Ստեփանակերտից Երեւան թռիչքներ չե՞ն իրականացվում տրանսպորտային ինքնաթիռներով կամ ուղղաթիռներով, որ այդ մարդկանց տարհանեն. տարհանման հարց դեռ չկա: Մեր ժողովրդի մեծամասնությունը չի ուզում ապրել Ադրբեջանի կազմում, բայց սա այլ խնդիր է. այս պահի դրությամբ պետք է փոքր-ինչ թեթեւացնենք իրավիճակը: Կենցաղային առումով իսկապես վիճակը շատ բարդ է, ունենք հազարավոր տեղահանվածներ, փախստականներ, զոհեր վիրավորներ, պետք է հոգանք հազարավոր փախստականների, տեղահանվածների կարիքները: Կան վիրավորներ, զոհեր, անհայտ կորածներ. մարդիկ կան, ովքեր շրջափակման մեջ են: Այստեղի բնակչությունը, փաստորեն, պաշարված է. այս հարցերը պետք է լուծենք:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՄԻՊ-Ը՝ ՀՐԵՏԱԿՈՇՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ադրբեջանի զինված ուժերի կողմից սանձազերծված ռազմական ագրեսիան Ստեփանակերտի եւ այլ քաղաքացիական բնակավայրերի ուղղությամբ ձեւախեղում է մարդու իրավունքների պաշտպանության ժամանակակից համակարգի հիմքում ընկած բոլոր արժեքները:

ՄԻՊ-ից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը կոչ է անում մարդու իրավունքների պաշտպանության մանդատ ունեցող միջազգային հեղինակավոր կազմակերպություններին եւ դերակատարներին անհապաղ քայլեր ձեռնարկել:

Պաշտպանը հատուկ ընդգծում է, որ Ադրբեջանի զինված ուժերի ագրեսիվ վարքագիծը կոպտորեն ոտնահարում է միջազգային իրավունքի սկզբունքները, իրական վտանգ է ներկայացնում քաղաքացիական բնակչության կյանքի իրավունքի եւ անվտանգության, ինչպես նաեւ մյուս հիմնարար իրավունքների ապահովման տեսանկյունից:

Հավելենք, որ պաշտպանը եւս մեկ անգամ հիշեցնում է՝ քաղաքական եւ տարածքային որեւէ հանգամանք չի կարող գերակայել մարդու իրավունքների պաշտպանությանը: Մարդու իրավունքները պետք է գերակա լինեն բոլոր իրավիճակներում եւ աշխարհի ցանկացած անկյունում: Պաշտպանը կոչ է անում իրավապաշտպան ամբողջ հանրությանը համախմբվել այս նպատակի իրացման շուրջ եւ կանխել մարդու իրավունքների ժամանակակից համակարգի ձեւախեղումը:

ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ ԻՐԱՎԻՃԱԿԻՆ

Աժ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ապօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը գրում է. «Արցախի Հանրապետությունը թիրախավորվել է Ադրբեջանի կողմից. ԱՀԱՋԱՆԳ՝ միջազգային գործընկերներիս:

Այսօր՝ ժամը մոտ 11:10-ից սկսած, Ադրբեջանը եւ՛ տարբեր տրամաչափի հրթիռներով, անօդաչուներով, եւ՛ այլ հարվածային զենքերով հարձակվել է Արցախի անպաշտպան ժողովրդի վրա: Հարվածում են Արցախի բոլոր ինքնապաշտպանական դիրքերին եւ հատուկենտ մնացած ռազմական օբյեկտներին:

Կեսօրից Արցախի դպրոցականներն ու մանկապարտեզի սաներն էվակուացվել են դեպի ապաստարաններ, Արցախում կյանքը կանգ է առել: Քաղաքացիները, որոնք 9 ամսից ավելի է, ինչ սոված օրեր են անցկացնում, այժմ գտնվում են կյանքի ու մահվան պայքարում. խախտվում է նրանց կյանքի իրավունքը:

Խաղաղ բնակչության վրա այս լայնամասշտաբ հարձակումն Ադրբեջանի կողմից տարբեր միջազգային կոնվենցիաների կոպտագույն խախտում է:

Հրատապ գրություններ եմ ուղարկել միջազգային իմ գործընկերներին եւ Հայաստանում հավատարմագրված դեսպաններին՝ նրանց ուշադրությունը հրավիրելով այս հանցագործության վրա, ակնկալելով հրապարակային կամ այլ ձեւաչափով դատապարտող հայտարարություն Ադրբեջանի հակամարդկային գործողությունների վերաբերյալ, ինչպես նաեւ կանխարգելիչ քայլերի իրականացում՝ զսպելու Ադրբեջանի ծավալապաշտական նկրտումները:

Ադրբեջանը պետք է պատժվի իր շարունակական հանցանքների համար»:

ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Երեւանի 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներն ամփոփել են 78 տեղամասերում իրականացված վերահաշվարկի արդյունքները:

Պատկերն այսպիսին է.

«Հանրային ձայն» կուսակցություն - ավելացել է 16 քվեաթերթիկ

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն - ավելացել է 31 քվեաթերթիկ

«Արդար Հայաստան» կուսակցություն - ավելացել է 5 քվեաթերթիկ

«Հաղթանակ» կուսակցություն - ավելացել է 1 քվեաթերթիկ

«Ուժը հայրենյաց» կուսակցություն - ավելացել է 6 քվեաթերթիկ

«Հայաստանի եվրոպական կուսակցություն» - պակասել է 2 քվեաթերթիկ

«Ազգային առաջընթաց» կուսակցություն - ավելացել է 32 քվեաթերթիկ

«Հանուն սոցիալական արդարության» կուսակցություն- ավելացել է 1 քվեաթերթիկ

«Հանրապետություն» կուսակցություն - պակասել է 3 քվեաթերթիկ

«Միացյալ Հայաստան» կուսակցություն - պակասել է 5 քվեաթերթիկ

«Լուսավոր Հայաստան» կուսակցություն - ավելացել է 4 քվեաթերթիկ

«Ժողովրդավարական համախմբում» - կուսակցություն՝ պակասել է 3 քվեաթերթիկ

«Ապրելու երկիր» կուսակցություն - ավելացել է 4 քվեաթերթիկ

«Մայր Հայաստան» դաշինք - ավելացել է 67 քվեաթերթիկ

Անվավեր քվեաթերթիկների թիվը պակասել է 266-ով

Անճշտությունների չափը - 10

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սեպտեմբերի 24-ին կամփոփի Երեւանի ավագանու ընտրությունների վերջնական արդյունքները:

ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐՆԵՐ ԵՆ ՍՏԱՑԵԼ

Իշխանության ստացած ու բաշխած աստղաբաշխական պարգեւավճարները այլեւս որեւէ մեկի համար նորություն չեն ու զարմանալի էլ չեն, սակայն բանից պարզվում է, որ իրավական համակարգն էլ չի զիջում ոչ միայն պարգեւավճարների քանակով, այլեւ հիմնավորումներով: «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրությունը բազմաթիվ բողոքներ է ստանում, որ սեպտեմբերի 14-ին ՀՀ ոստիկանության ողջ համակարգը ստացել է պարգեւավճարներ, յուրաքանչյուրը՝ մոտավորապես 120.000 դրամ, սակայն Ոստիկանության այն աշխատակիցները, որոնք գործուղված են եղել ՀՀ ոստիկանական ակադեմիա՝ վերապատրաստման, պարեկային ծառայության դասընթացների եւ այլն, չեն ստացել պարգեւավճարներ, առանց հիմնավորման: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել ՀՀ ոստիկանության հետ՝ պարզելու՝ ինչ հիմնավորմամբ եւ ընտրությամբ են ոստիկանության աշխատակիցների մի մասը ստացել պարգեւավճարներ, մի մասը՝ ոչ: Օրեր անց միայն Ոստիկանությունից մեզ ոչ թե ներկայացրին հարցի պատասխանները, այլ խնդրեցին 30 օր՝ տեղեկություն տրամադրելու համար հավելյալ աշխատանք կատարելու համար: Այսինքն՝ ոստիկանական համակարգը 30 օրվա ընթացքում հազիվ պետք է կարողանա «մտածել» հիմքերը անարդարացիորեն բաժանված պարգեւավճարների համար: «Ժողովուրդ» օրաթերթը կհրապարակի այն հիմնավորումները, որը կներկայացնի ՀՀ ոստիկանությունը՝ որպես բացատրություն: Բայց ակնհայտ է, որ խրախուսվել են յուրային ոստիկանները, «պատժվել»՝ օտարները:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՆԱԴԵԿՎԱՏ ՎԱՐՉԱՊԵՏԸ

ՀՀ կառավարության սեպտեմբերի 22-ի նիստը եկավ եւս մեկ անգամ հիմնավորելու, որ իշխանությունը՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, պարզապես ադեկվատ չէ հայաստանյան իրողություններին:

Նիկոլ Փաշինյանն իր ելույթում անդրադարձավ Արցախում տիրող իրավիճակին եւ, ի դեպ, բավական անվրդով, նույն անվրդովությամբ նա շարունակեց նիստում քննարկել ու թվարկել, թե հայաստանյան բնակավայրերում ինչ սուբվենցիոն ծրագրեր են իրականացնում, որ փողոցներն ու որ նրբանցքներն են ասֆալտապատվում, որ կրթական կամ մշակութային հիմնարկներն են վերանորոգվում:

Եվ այսպես, նա բավական պատկառելի ժամանակ նվիրեց փողոց առ փողոց թվարկելու համար, եւ սա անում է մի իրավիճակում, երբ արցախահայերը պարզապես կյանքի ու մահվան շեմին են, գոյության վտանգի առաջ:

Փաշինյանը, մյուս կողմից, սա անում է հաշվարկված. պարզապես փորձում է ընտրազանգվածին իր կողմը պահել ու նրանց ասֆալտի եւ սուբվենցիոն մյուս ծրագրերով կերակրել՝ հետագայում կրկին ձայն ստանալու ակնկալիքով: Նա աշխատում է բացառապես մի ուղղությամբ՝ ամեն գնով մնալ իշխանության եւ ապահովել հետագա վերարտադրությունը, եթե հասնի ընտրությունների:

Դա է պատճառը, որ կառավարության նիստի առաջին իսկ զեկուցվող հարցը սուբվենցիոն ծրագրերն էին:

«ԴԱՎԱՃԱՆՆԵՐԻ» ՈՐՍ

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամները շատ ծանր վիճակում են գտնվում: Մի կողմից ավագանու ընտրություններում կրած պարտությունը, մյուս կողմից՝ Երեւանում ստեղծված այս վիճակն է, երբ օրեր շարունակ Նիկոլ Փաշինյանի իշխանության հրաժարականի պահանջով քաղաքացիները փակել են փողոցները եւ հրաժարվում են տուն գնալ: Այս ծանր վիճակում ՔՊ-ական պատգամավորներից ոմանք շարունակում են իրենց անհոգ կյանքը, նրանց չի հետաքրքրում իրենց թիմի ծանր վիճակը:

ՔՊ-ական պատգամավոր Հասմիկ Հակոբյանը վերջերս մեկնել էր էկզոտիկ Վիետնամ՝ Հանոյ քաղաքում քննարկման մասնակցելու: Թեեւ վերջինս ֆեյսբուքյան իր էջում գրել է, որ Վիետնամում քննարկման ժամանակ խոսել է Լեռնային Ղարաբաղի հարցի մասին, բայց վերջինս այնտեղ ընդամենը մի քանի րոպեանոց ելույթ է ունեցել, փոխարենը օրեր շարունակ մնացել է այնտեղ եւ վայելել իր հանգիստը:

Պատգամավորն ընտրական գործընթացներին չէր մասնակցում, միայն մի երկու օր քարոզարշավի է մասնակցել ու վերջ: Արփի Դավոյանն էլ մի կողմից է անընդհատ գործուղումների մեկնում, ու կարծես թիմի ծանր վիճակը միեւնույնն է նրանց համար:

ՔՊ-ում իրենց թիմակիցների այս վարքագիծը դավաճանական են համարում իրականում ու կարծում են, որ այս ծանր վիճակում պատգամավորներից ոմանք մենակ են թողել իրենց թիմին:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԻՆՉՊԵՍ ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ ՆԻՍՏՈՒՄ

Սեպտեմբերի 21-ին տեղի ունեցավ ՄԱԿ ԱԽ նիստը: Նիստի ժամանակ քննարկվեց Արցախում տիրող իրավիճակը: «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է, թե որ երկրի ներկայացուցիչն ինչպիսի ելույթ է ունեցել նիստի ընթացքում:

ՄԱԿ-ում ՌԴ ներկայացուցիչը հայտարարեց, որ ՌԴ -ն շարունակում է առաջատար դեր խաղալ՝ աջակցելով հարաբերությունների նորմալացման գործընթացին Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ:

«Որեւէ մեկից ավելի մենք ենք շահագրգռված այս իրավիճակի հնարավորինս շուտ հանգուցալուծմամբ: Հակամարտության լուծման համապատասխան պարամետրերը հայտարարվել են Երեւանի իշխանությունների կողմից ԵՄ գագաթնաժողովներում, որտեղ իրենք ճանաչել են, որ ԼՂ-ն Ադրբեջանի մաս է: Միեւնույն ժամանակ, այդ գագաթնաժողովների ավարտական հռչակագրերում, որոնց Երեւանը տվել է համաձայնությունը, Ղարաբաղի հայ բնակչության իրավունքների, անվտանգության երաշխավորման թեման պարզապես, դժբախտաբար, բաց է թողնվել:

Մենք ակնկալում ենք, որ Բաքվի եւ Ստեփանակերտի միջեւ շփումների արդյունքում հնարավոր կլինի հնարավորինս շուտ թեթեւացնել մարդասիրական իրավիճակը տարածաշրջանում եւ ապահովել կայունություն ԼՂ բնակիչների առօրյա կյանքում: Մենք ամեն հնարավոր կերպ դրան կաջակցենք: Մենք պետք է աստիճանաբար ճանապարհային քարտեզ մշակենք ԼՂ բնակչությանն Ադրբեջանի սահմանադրական կարգին ինտեգրելու համար՝ հստակորեն երաշխավորելով նրանց իրավունքներն ու անվտանգությունը: Այս գործընթացներին ակտիվորեն կաջակցեն ռուս խաղաղապահները»:

ՄԱԿ-ում ԱՄՆ ներկայացուցիչը հայտնեց, որ ԱՄՆ-ն մտահոգված է ԼՂ-ի իրավիճակով, որը պայմանավորված է նրանով, որ Ադրբեջանը շարունակում է ռազմական գործողությունները:

«Մենք կոչ ենք անում այդ գործողությունները դադարեցնել անմիջապես, սակայն այս պահին իրավիճակը տեղում մնում է ծանր: Եվ մենք խորապես մտահոգված ենք ստացվող տեղեկություններով՝ քաղաքացիական անձանց նկատմամբ բռնության դեպքերի մասին: Պարզ արտահայտվեմ՝ Ադրբեջանը պատասխանատվություն է կրում ապահովելու իր զինված ուժերի գործողությունների ամբողջական համապատասխանությունը միջազգային իրավունքի նորմերին, այդ թվում՝ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերին, որոնք վերաբերում են մարտական գործողությունների վարմանը, քաղաքացիական անձանց պաշտպանությանը եւ մարտական գործողությունների մասնակիցների նկատմամբ մարդավայել վերաբերմունքին: Ադրբեջանը նաեւ միջազգային պարտավորություններ եւ հանձնառություններ ունի՝ հարգելու իր տարածքում գտնվող բոլոր անձանց իրավունքներն ու հիմնարար ազատությունները»:

Ֆրանսիայի ներկայացուցիչն էլ նշում է, որ Ֆրանսիան անմիջապես եւ կտրուկ դատապարտեց այս անընդունելի հարձակումը, որը հակասում է վերճերի խաղաղ լուծման սկզբունքին, որն ամրագրված է ՄԱԿ-ի կանոնադրությամբ:

«Մենք միակը չենք, որ այդպես ենք կարծում: Այս գործողության հետեւանքները հատկապես ծանր եղան, հարյուրավոր վիրավորներ կան, տասնյակ մարդիկ են զոհվել, այդ թվում՝ քաղաքացիական անձինք եւ երեխաներ: Հրադադարը հայտարարվեց երեկ. այն կենսական կարեւորություն ուներ, եւ շատ կարեւոր է, որ այն պահպանվի»:

Գերմանիայի արտգործնախարարի խոսքով՝ Ադրբեջանը ընտրել է ռազմական ուժով իրավիճակը փոխելու ճանապարհը: «Չափազանց շատ մարդիկ են արդեն զոհվել ընդամենը 2 օրվա ընթացքում»:

Ներկայացուցիչը նաեւ հայտարարեց. «Մենք հաստատակամորեն դատապարտում ենք Բաքվի ռազմական հարձակումը եւ կոչ անում վերջինիս վերջնականապես դադարեցնել ռազմական գործողությունը»:

Շվեյցարիայի ներկայացուցիչը շեշտեց, որ Շվեյցարիան խորապես մտահոգված է ռազմական գործողություններով, որոնք նախաձեռնեց Ադրբեջանը: ԼՂ բնակչությունն արդեն իսկ մարդասիրական ծանր իրավիճակում էր եւ կրում էր տառապանք: Իրավիճակը մնում է փխրուն. «Մենք պետք է չսահմանափակվենք գեղեցիկ բառերով»:

Մալթայի ներկայացուցիչը պնդում է, որ Մալթան դատապարտում է ցանկացած գործողություն, որը վտանգում է քաղաքացիների կյանքը. «Կոչ ենք անում ամբողջովին դադարեցնել մարտական գործողությունները»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄԻԱՑԵԼ ԵՆ ԱԿՑԻԱՅԻՆ

Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի ուսանողները միացել են անհնազանդության ակցիաներին: Նրանք հայտարարել են դասադուլ: Այս մասին ակցիայի մասնակիցներին հայտնեցին ուսանողները եւ նշեցին, որ այժմ լսարանները դատարկ են:

Քաղաքացիներն անհնազանդության ակցիաներ են իրականացնում, նրանք կոչ են անում քաղաքացիներին միանալ իրենց:

Նշենք, որ Արցախի ճակատագրով մտահոգ քաղաքացիներն արդեն երրորդ օրն է՝ պահանջում են, որ Նիկոլ Փաշինյանը հրաժարական ներկայացնի, ինչպես նաեւ պահանջում են ՀՀ իշխանություններից Հայաստանում ընդունել տեղահանված արցախցիներին:

Նշենք նաեւ, որ դասադուլին են միացել նաեւ հետեւյալ ուսումնական հաստատությունների ուսանողները.

Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտ,

Ֆրանսիական համալսարան,

Շառլ Ազնավուրի անվան արվեստի եւ մշակույթի պետական քոլեջ,

ԵՊՀ Արեւելագիտության ֆակուլտետ,

Տնտեսագիտական համալսարան,

Շիրակի պետական համալսարան,

Բրյուսովի անվան համալսարան,

Կոնսերվատորիա:

ԹԵԺ ՔՆՆԱՐԿՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Հայաստանում ստեղծված իրավիճակի պատճառով իր թիմի հետ քննարկվել է պարետային ժամ սահմանելու որոշումը: Նշենք, որ Երեւանում արդեն գրեթե 3 օր անհնազանդության ցույցեր են, եւ իշխանականների շրջանում խուճապ է առկա:

ԿԱՅՑԵԼԻ ԻՐԱՆ

Հայաստանի անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը հոկտեմբերի 1-2-ը կայցելի Իրան:

Այս մասին Անվտանգության խորհրդի քարտուղարը հայտնել է Հանրային հեռուստաընկերությանը տված հարցազույցում:

Նա նշեց, որ Իրանում նախատեսվում են բարձր մակարդակի բանակցություններ հայ-իրանական հարաբերությունների շուրջ:

ՁԵՐԲԱԿԱԼՎԵՑԻՆ

ՌԴ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ԳՈՒՅՔՆ ԵՆ ՎՆԱՍԵԼ

Երեկ վաղ առավոտվանից ակցիաներ են մայրաքաղաքի տարբեր փողոցներում, մի շարք ուսումնական հաստատություններ հայտարարել են դասադուլ, իսկ ընկերությունները՝ գործադուլ: «Ժողովուրդ» օրաթերթին համակարգից հայտնի դարձավ, որ այս պահի դրությամբ ձերբակալվել են 3 անձ, որոնց իրավապահները ձերբակալել են Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպանատան գույքը վնասելու համար, 50-ից ավելի անձինք բերման են ենթարկվել ոստիկանություն՝ վարչական իրավախախտման հիմքով: Նկատենք, որ այս թվերը պարբերաբար փոփոխության են ենթարկվում:

«Ժողովուրդ» օրաթերթը դիմեց նաեւ ՀՀ գլխավոր դատախազություն եւ հետաքրքրվեց, թե սեպտեմբերի 19-ից մինչ օրս, Արցախում ստեղծված իրավիճակով պայմանավորված, բողոքի ակցիաների արդյունքում քանի անձ է կալանավորվել:

Ի պատասխան մեզ՝ հայտնեցին. «Այս պահի դրությամբ կալանավորվածները 4-ն են, որոնցից 3-ը՝ Քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի առաջին մասով (հասարակական անվտանգությանը սպառնացող զանգվածային անկարգություններին մասնակցելը, եթե մասնակցի արարքը զուգորդվել է բռնություն գործադրելով կամ անձի կյանքը կամ առողջությունը վտանգող այլ արարքի կատարմամբ, հրկիզումով, գույք ոչնչացնելով կամ վնասելով, հրազեն, պայթուցիկ նյութ կամ պայթեցման սարք գործադրելով կամ այդ գործողությունները կազմակերպելով կամ ղեկավարելով), իսկ 1-ը՝ 393-րդ հոդվածի 1-ին մասով (իրացնելու նպատակով թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) ապօրինի արտադրելը, պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, տեղափոխելը, առաքելը, տարածելը, գովազդելը կամ դրանք ապօրինի իրացնելը կամ, մեկ ուրիշի դրդմամբ, նրա համար թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) ապօրինի ձեռք բերելը):

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 19-ին Ադրբեջանը սանձազերծել է հերթական լայնածավալ ագրեսիան Լեռնային Ղարաբաղի ժողովրդի նկատմամբ՝ նպատակ ունենալով ավարտին հասցնել էթնիկ զտումների իր քաղաքականությունը: Ադրբեջանի ագրեսիայի սկսելու առաջին իսկ րոպեներից Հանրապետության հրապարակում քաղաքացիները ներկայացնում են իրենց բողոքի ձայնը ներկայիս կառավարության վարած քաղաքականության դեմ:

Քաղաքացիները պարբերաբար բողոքի ակտիվ գործողություններ են իրականացնում քաղաքի տարբեր մասերում՝ փակելով քաղաքի փողոցները:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՒՇԱԳՐԱՎ

ՀԱՐՁԱԿՈՒՄ՝ ԵԿՄ ԱՆԴԱՄԻ ՎՐԱ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ գիշերն իր տան բակում ավազակային հարձակման ենթարկված անձը ԵԿՄ անդամ Արթուր Հովակիմյանն է: Նրա վրա անձինք են հարձակվել, որոնք տարել են 6000 դոլար, ինչպես նաեւ նախկին վարչապետ Անդրանիկ Մարգարյանի կողմից պարգեւատրված «Մակարով» տեսակի ատրճանակը

Նշենք, որ Shaշshyan.ճoշ-ը գրել էր, որ սեպտեմբերի 21-ին ավազակային հարձակում է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 23:30-ի սահմաններում դիմակավորված անհայտ 3 անձինք Անդրանիկի փողոցի 114 շենքի մոտ բռնություն են գործադրել Երեւանի բնակիչ, 57-ամյա Արթուր Հ?-ի նկատմամբ, սպառնալիքի տակ նրանից հափշտակել ձեռքին եղած պայուսակը, ապա դիմել փախուստի:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, դեպքի վայր է ժամանել ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Մալաթիայի բաժնի օպերատիվ խումբը՝ քրեական հետախուզության բաժանմունքի պետի գլխավորությամբ:

Ժամանել է նաեւ Հայաստանի քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Մալաթիայի քննչական բաժնի խումբը՝ քննիչ Գրիգորյանի գլխավորությամբ:

Տեղում պարզվել է, որ դիմակավորված 3 անձանց կողմից Արթուր Հ.-ին պատկանող գողացված պայուսակում եղել են մոտ 6000 ԱՄՆ դոլար, անձնական փաստաթղթեր, 3 հատ բջջային հեռախոսներ եւ 2002 թվականին ՀՀ վարչապետի կողմից որպես պարգեւ նրան տրված «Մակարով» տեսակի ատրճանակ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲՆԱԿՉՈՒՀԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԵՑ

Հաղորդում է ստացվել այն մասին, որ 2023 թվականի սեպտեմբերի 21-ին մայրաքաղաքում անցկացվող զանգվածային ակցիաների ընթացքում դրա մի խումբ մասնակիցներ ժամը 20:50-ի սահմաններում փակել են Երեւան քաղաքի Կորյուն-Հերացի փողոցների խաչմերուկը: Փողոցը բացելու եւ հասարակական կարգը պահպանելու վերաբերյալ տեղում ծառայություն իրականացնող ոստիկանության աշխատակցի օրինական պահանջը ակցիայի մասնակիցների կողմից անտեսելու պայմաններում դրա մասնակիցներից մի կին մոտեցել է ոստիկանության տվյալ աշխատակցին եւ ձեռքերով հարվածներ հասցրել վերջինիս դեմքի եւ կրծքավանդակի շրջաններին, խոչընդոտել նրա կողմից իր ծառայողական պարտականությունների կատարմանը. հայտնում են ՀՀ քննչական կոմիտեից: Նշված հանցավոր արարքը կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով՝ դեպքի վայրից նշված կինը՝ Երեւան քաղաքի 47-ամյա բնակչուհին, տեղափոխվել է ոստիկանության բաժին:

Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ: Քննիչի որոշմամբ վերջինս ձերբակալվել է:

ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական երկրորդ բաժնում նախաքննությունը շարունակվում է:

ԿԱՐԵՎՈՐ

ՄԵՐԸ՝ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ

Նախորդ տարի, երբ ընդդիմությունը կրկին փողոց էր դուրս եկել՝ պայքարելով իշխանությունների ազգակործան քաղաքականության դեմ, ոստիկանությունն անհամաչափ բիրտ ուժ էր կիրառել:

Հիշում եք՝ եղան լուրջ վնասվածքներ ստացած անձինք, եւ շատ երկար տարիներ ընդդիմադիր, այժմ ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը չէր թաքցրել իր գոհունակությունը ոստիկանական բարբարոսությունների առթիվ, անգամ շնորհակալություն էր հայտնել: «Ոստիկանական ուժերը եւ բոլորը առհասարակ գործում են խիստ ժողովրդավարական օրենքների տառին համաձայն, իրենց ծառայությունը իրականացնում են ամենայն պատշաճությամբ: Իսկապես, զարմանում եմ մեր ոստիկանների համբերության եւ նրանց պինդ նյարդերի վրա. նրանք փայլուն ծառայություն են իրականացնում, նաեւ շնորհակալություն եմ հայտնում նրանց»,- ասել էր Ավանեսյանը:

Երեկ, իհարկե, կառավարության նիստից հետո նախարարները ճեպազրույցներ չունեցան, խուսափեցին լրագրողների հետ հանդիպումից: Հնարավոր չեղավ պարզել՝ վերջին օրերի վայրագությունների համար այս անգամ էլ է Անահիտ Ավանեսյանը շնորհակալություն հայտնում ոստիկաններին, թե ոչ: Բայց նկատենք, որ երկու օր առաջ նա այցելել էր հիվանդանոցում քաղաքացիների հետ բախումների արդյունքում բուժում ստացող ոստիկաններին, բայց ո՛չ ցուցարարներին, ո՛չ մարդկանց, որոնք ըմբոստացել են Արցախը վերջնականապես հանձնելու՝Նիկոլ Փաշինյանի գործողություններին:

Հետաքրքիր է՝ եթե ոստիկանները նույնն անեին նաեւ Ավանեսյանի եւ նրա շեֆի ընդդիմադիր տարիներին, նա կրկին շնորհակալություն կհայտնե՞ր, թե՞, ընդհակառակը, կաղաղակեր ժողովրդավարության ոտնահարման մասին: Այդ ընթացքում «կարմիր բերետավորները» ոտքերով ու ձեռքերով հարվածում են ցուցարարներին:

Երեկ էլ մարմնական վնասվածք է ստացել ԱԺ պատգամավոր Գեղամ Մանուկյանը:

Հետաքրքիր է՝ Անահիտ Ավանեսյանը կայցելի՞ օրենսդիր մարմնի ներկայացուցչին հիվանդանոցում, թե՞ նման դեպքերում այցերն արգելված են. դե, հանկարծ շեֆը չբարկանա ու պաշտոնանկ չանի ոլորտը ձախողած ոչ մասնագետ նախարարին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 20-ից 22-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 86 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԴԻՄԵԼ Է ԴԱՏԱԽԱՋԻՆ

2014թ. օգոստոսի 7-ին՝ Վերին Կարմիրաղբյուրի այգիներում «Եղվարդշին» ԲԲԸ-ի կողմից ոռոգման ջրագծի ապամոնտաժման ժամանակ, անվտանգության կանոնները չպահպանելու հետեւանքով եռակցման ապարատից թռած կայծից հրդեհ է բռնկվել, որը մեծ վնաս է պատճառել 37 ընտանիքին պատկանող 6.8 հա այգուն: «Եղվարդշինը» աշխատանքները կատարել է առանց շինթույլտվության, այդ ընկերությունը հրդեհից 15 օր հետո Վ. Կարմիրաղբյուրի համայնքապետարանից ստացել է 952 գծամետր խողովակաշարի ապամոտաժման շինթույլտվություն: Վ. Կարմիրաղբյուրի բնակիչ Վազգեն Մանուչարյանը հրդեհից իր կրած վնասների համար 5 անգամ նախագահ Սերժ Սարգսյանի նստավայր է գնացել, այնտեղ 4 անգամ նամակ հանձնել: Նա հայտնեց, որ հրդեհից ոչնչացել են իր 8 տարեկան թվով 31 ծառերը, որոնցից 25-ը՝ կեռասի, 6-ը դեղձի ծառեր էին: Տավուշի մարզի առաջին ատյանի դատավոր Ռաֆիկ Մելքոնյանն իր կայացրած վճռով արդարացրել է «Եղվարդշին» աշխատակցին, որը հրդեհի պատճառ դարձած զոդման աշխատանքներ է կատարել, վերաքննիչ դատարանն անփոփոխ է թողել այդ վճիռը, իսկ վճռաբեկ դատարանը բողոքը վարույթ չի ընդունել: Վ. Մանուչարյանը հայտնեց, որ 6 տարբեր դատարաններում արդարություն է փնտրել, սակայն այն չգտնելով՝ հայտնվել է եւս 8 միլիոն դրամ պարտքերի տակ, ստիպված արտագնա աշխատանքի է մեկնել Ռուսաստան: Նա ասաց, որ «Եղվարդշինի» ապամոնտաժած ոռոգման խողովակաշարն Այգեպար եւ Ներքին Կարմիրաղբյուր գյուղերի միջնամասում էր՝ սահմանի եզրին, ոռոգման մեծ խողովակները բետոնյա մեծ ամրակների վրա էին, դրանք կազմում էին պաշտպանական գիծ, որը քանդել են, տեղի է ունեցել մոտ 2 միլիոն դոլար արժեքով խողովակների գողություն: Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում հաստատվել է, որ 147 գծամետր նախատեսվածից ավել մոնտաժված խողովակներն ի պահ են հանձնվել «Ուտիք» ՁՕԸ-ին: «Եղվարդշին» ԲԲԸ-ի կողմից ոռոգման ջրի խողովակաշարի գողության վերաբերյալ Արթուր Լոբյանի կողմից (նա այժմ ոստիկանության Բերդի բաժնի պետն է) 2016թ. ապրիլի 25-ին, ՀՀ քրեական օրենսգրքի 322 հոդվածի 1-ին մասով, քրեական գործ է հարուցվել, սակայն գործը քննած քննիչն այն փակել է: Մանուչարյանը հայտնեց, որ «Ուտիք» ՁՕԸ-ի տնօրեն Աշոտ Գեւորգյանը Ջրային պետական կոմիտեի ԾԻԳ-ից 56 միլիոն դրամ արժեքով կեղծ ծրագիր է բերել գողացած խողովակներով Բերդ քաղաքից Տավուշ գյուղ ջրագիծ կառուցելու համար: Դա՝ այն դեպքում, երբ նշված հրդեհից երկու տարի առաջ վարչապետ Տիգրան Սարգսյանը մասնակցել է այդ հատվածում արդեն գործող ջրագծի բացմանը: Մանուչարյանն այժմ դիմել է ՀՀ գլխավոր դատախազին, որպեսզի ոռոգման խողովակների գողութան վերաբերյալ կրկին քրեական գործ հարուցվի:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՐՁԱԳԱՆՔ

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ

«Ղարաբաղի հայ խաղաղ բնակչության բռնի տեղահանումը ռազմական կամ այլ միջոցներով կարժանանա ԵՄ-ի խիստ արձագանքին»,- ասել է Եվրոպական միության արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելը:

Ստորեւ ներկայացնում ենք հայտարարությունն ամբողջությամբ.

«Եվրամիությունը դատապարտում է Ադրբեջանի ռազմական գործողությունը Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության դեմ եւ ցավում է այս սրման հետեւանքով առաջացած զոհերի եւ մարդկային կորուստների համար: Մենք ի գիտություն ենք ընդունել համապատասխան հայտարարությունները, որ ձեռք է բերվել հրադադարի համաձայնություն: Մենք ակնկալում ենք ռազմական գործողությունների անհապաղ եւ ամբողջական դադարեցում եւ հրադադարի պահպանում:

ԵՄ-ն կոչ է անում Ադրբեջանին թույլատրել անհապաղ եւ անարգել հումանիտար օգնության մուտքը կարիքավոր բնակչությանը, այդ թվում՝ Լաչինի միջանցքի ամբողջական վերաբացման միջոցով: ԵՄ-ն եւ նրա անդամ երկրները պատրաստ են հրատապ մարդասիրական օգնություն ցուցաբերել: ԵՄ-ն կոչ է անում Բաքվին եւ Ղարաբաղի հայերին անհապաղ ներգրավվել համապարփակ եւ թափանցիկ երկխոսության մեջ:

Ադրբեջանը պատասխանատվություն է կրում՝ ապահովելու ղարաբաղցի հայերի իրավունքները եւ անվտանգությունը, այդ թվում՝ առանց ահաբեկման եւ խտրականության իրենց տներում ապրելու իրավունքը: Քաղաքացիական բնակչության բռնի տեղահանումը ռազմական կամ այլ միջոցներով կարժանանա ԵՄ-ի խիստ արձագանքին: ԵՄ-ն պատրաստ է ձեռնարկել համապատասխան գործողություններ իրավիճակի հետագա վատթարացման դեպքում:

ԵՄ-ն վերահաստատում է իր աջակցությունը ինչպես Ադրբեջանի, այնպես էլ Հայաստանի ինքնիշխանությանը եւ տարածքային ամբողջականությանը: Մենք կոչ ենք անում Ադրբեջանին վերահաստատել իր միանշանակ հավատարմությունը Հայաստանի տարածքային ամբողջականությանը՝ 1991թ. Ալմաթիի հռչակագրի համաձայն: ԵՄ-ն պատրաստ է հետագայում էլ աջակցել Հայաստանի ժողովրդավարական ճանապարհով ընտրված իշխանություններին՝ երկրում ժողովրդավարական բարեփոխումների կայունությանը, անվտանգությանը եւ շարունակմանը: Հայաստանում Եվրոպական միության առաքելությունը (EUMA) կշարունակի դիտարկել եւ զեկուցել Ադրբեջանի հետ միջազգային սահմանի հայկական կողմում անվտանգության իրավիճակի մասին:

ԵՄ-ն կոչ է անում վերսկսել բանակցությունները Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ բոլոր առկախ հարցերի շուրջ՝ հաշվի առնելով խաղաղության պայմանագրի կնքումը, եւ լիովին հավատարիմ է մնում նման բանակցություններին աջակցելուն: Եվրամիությունը լիովին հավատարիմ է կողմերի միջեւ երկխոսությունը հեշտացնելուն, հատկապես՝ Եվրոպական խորհրդի նախագահի հովանու ներքո, ԵՄ հատուկ ներկայացուցչի աջակցությամբ երկարատեւ խաղաղություն ապահովելու համար՝ ի շահ տարածաշրջանի բոլոր մարդկանց»:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆԻՍՏ

ԼՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղում իրավիճակը դինամիկ ու փոփոխական է: Այս մասին սեպտեմբերի 22-ին՝ կառավարության նիստին, հայտարարեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Այն տեղեկությունը, որ մենք ունենք, կես ժամից կարող է փոխվել, բայց շատ կարեւոր է, որ ամեն պահի ունենանք ճշգրտված տեղեկություն այդ պահի մասին ու նաեւ որոշակի պատկերացումներ դինամիկայի մասին»,- ասաց նա:

Վարչապետը նշեց, թե հումանիտար իրադրության բարելավման վերաբերյալ որոշակի դրական հույսեր կան. չի բացառվում, որ այսօր հումանիտար աջակցության ավելի մեծ խմբաքանակներ մտնի Լեռնային Ղարաբաղ:

«Ավելի մանրամասն չեմ կարող ասել, որովհետեւ կան որոշակի պայմանավորվածություններ, այս պահին դրանց իրագործումը պետք է մեկնարկի: Կմեկնարկի, թե ոչ, ես չեմ կարող ասել, բայց որ կան պայմանավորվածություններ, դա հստակ է»,-ասաց նա:

Ի դեպ, ադրբեջանական լրատվամիջոցները գրել էին, որ Բաքուն Ստեփանակերտ է ուղարկել «հումանիտար օգնության որոշակի խմբաքանակ»:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՖԻՆԱՆՍԱՎՈՐԻ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ՀՀ կառավարությունը գումար կհատկացնի ութ մարզպետների աշխատակազմերին՝ քսան համայնքների երեսուն սուբվենցիոն ծրագրեր ֆինանսավորելու համար:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ որոշումն ընդունվեց ՀՀ կառավարության՝ սեպտեմբերի 22-ին գումարված նիստում:

Հայաստանի տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը, ներկայացնելով նախագիծը, շեշտեց՝ Արագածոտնի մարզի երկու ծրագրի համար նախատեսվում է տրամադրել 42 մլն դրամ, Արմավիրի մարզի երկու ծրագրի համար՝ 12,5 մլն դրամ, Գեղարքունիքի մարզի 4 ծրագրի համար՝ 307 մլն դրամ, Լոռու մարզի 6 ծրագրի համար՝ 347 մլն դրամ, Կոտայքի մարզի 8 ծրագրի համար՝ 503 մլն դրամ, Շիրակի մարզի երկու ծրագրի համար՝ 124 մլն դրամ, Սյունիքի մարզի երկու ծրագրի համար՝ 173 մլն դրամ, եւ Տավուշի մարզի 4 ծրագրի համար՝ 289 մլն դրամ:

«Նախագծի ընդունմամբ, հունվարի 1-ից սկսած, ՀՀ կառավարությունը 17 մլրդ 116 մլն դրամ կվճարի սուբվենցիոն ծրագրերի համար»,- շեշտեց Սանոսյանը:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը փաստեց, որ ծրագիրը մեկնարկում է Արագածոտնի մարզի Շամիրամ համայնքից, որը եզդիաբնակ է: Նա հիշեցրեց, որ փոփոխությունը սուբվենցիոն ծրագրերի բանաձեւերում իրականացրել են, երբ ազգային փոքրամասնությամբ բնակչություն ունեցող համայնքներին ավելի մեծ չափով են ֆինանսավորում:

Գնել Սանոսյանն էլ ընդգծեց, որ ՀՀ վարչապետի հանձնարարությամբ որոշակի ուղիղ ծրագրերի իրականացման ուղղությամբ աշխատում են, նախագծման որոշ աշխատանքներ են իրականացվում:

Հայաստանի վարչապետը կարեւորեց համայնքներում աշխատանքները, քանի որ համայնքների մեծ մասը չի խոշորացվել: Ըստ Փաշինյանի՝ սուբվենցիոն ծրագրերի հետ կապված նրանց կարողությունները էականորեն պակաս են, եւ պետք է աջակցել:

● *Անցած 2 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 21 ՃՏՊ. 32 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԽՆԴԻՐՆԵՐ

ԱՆԿԱՐԱՅԻ ՀՈՒՅՍԵՐԸ

Անկարան ակնկալում է, որ Ղարաբաղում Ադրբեջանի ՁՈՒ գործողություններից հետո երկարաժամկետ խաղաղություն կգա, եւ խաղաղության համաձայնագրի կետերը կյանքի կկոչվեն. այս մասին հայտարարել է Թուրքիայի ազգային պաշտպանության նախարար Յաշար Գյուլերը:

Սեպտեմբերի 19-ին Ադրբեջանը ռազմական գործողություն սկսեց Ղարաբաղում՝ դա անվանելով «տեղական բնույթի հակաահաբեկչական միջոցառումներ»՝ սահմանադրական կարգը վերականգնելու համար: Երեւանը սա որակեց որպես ագրեսիա՝ ասելով, որ Ղարաբաղում հայկական ստորաբաժանումներ չկան: Մեկ օր անց ռուս խաղաղապահների միջնորդությամբ պայմանավորվածություն է ձեռք բերվել հրադադարի մասին: Հրադադարի պայմանների թվում նախանշվել է, մասնավորապես, հայկական ուժերի զինաթափումը եւ ծանր տեխնիկայի դուրսբերումը Ղարաբաղից:

Սեպտեմբերի 21-ին Ադրբեջանի Եվլախ քաղաքում՝ Ստեփանակերտից 100 կիլոմետր հյուսիս-արեւելք, տեղի է ունեցել ղարաբաղահայության ներկայացուցիչների հանդիպումն ադրբեջանական պատվիրակության հետ՝ նվիրված տարածաշրջանի հանրապետության ինտեգրմանը:

ԿԱՅԱՆ՝ ԿՈՌՆԻՁՈՐՈՒՄ

ՀՀ կառավարությունը Սյունիքի մարզի Կոռնիձոր գյուղում կայան կբացի Լեռնային Ղարաբաղում հումանիտար ճգնաժամը հաղթահարելու համար:

Կայանի նպատակն է միավորել միջազգային կազմակերպությունների եւ նախաձեռնությունների ջանքերը, ապահովել մարդասիրական բեռների անվտանգությունը Ղարաբաղ ուղարկելու համար, ինչպես նաեւ օտարերկրյա իրավապաշտպան կազմակերպություններին եւ լրագրողներին օբյեկտիվորեն ներկայացնել հումանիտար ճգնաժամի վերաբերյալ տվյալներ:

Հիշեցնենք, որ 2022 թվականի դեկտեմբերի 12-ին քաղաքացիական համազգեստով մի խումբ ադրբեջանցիներ «բնապահպանական» պատրվակով փակել էին Լեռնային Ղարաբաղը Հայաստանի Հանրապետության հետ կապող Ստեփանակերտ-Գորիս ավտոճանապարհը, որտեղից հեռացել էին ապրիլի 28-ին: Ադրբեջանը Լաչինի միջանցքում ապօրինի անցակետ է ստեղծել՝ ամբողջությամբ վերահսկողության տակ վերցնելով այն: Ղարաբաղը կորցրել է նաեւ Հայաստանի Հանրապետությունից գազի եւ էլեկտրաէներգիայի մատակարարումները: Հունիսի 26-ին Երեւանից Ղարաբաղ է ուղարկվել մոտ 400 տոննա մարդասիրական օգնություն: Նրանց արգելել են անցնել, եւ նրանք կանգնած են Կոռնիձոր գյուղի մոտ՝ Լաչինի միջանցքի սկզբնամասում: Օգոստոսի 30-ից այնտեղ կանգնած են ֆրանսիական մի շարք քաղաքների մարդասիրական օգնությամբ բեռնատարներ: Սեպտեմբերի 18-ին Կարմիր խաչի մարդասիրական օգնությունը Ղարաբաղ հասցվեց Աղդամից ճանապարհով եւ Լաչինի միջանցքով, սակայն 19-ին Ադրբեջանը լայնածավալ ռազմական ագրեսիա սկսեց Ղարաբաղի դեմ:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՆՁՆԱԳՐԵՐ

ԿԼՈՐ ԿՆԻՔԻ ԿԱՐԻՔ ԱՅԼԵՎՍ ՉԿԱ

Կառավարությունը սեպտեմբերի 22-ի նիստում ուժը կորցրած ճանաչեց ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված հին նմուշի անձնագրերում օտարերկրյա պետություններում վավերականության ժամկետի վերաբերյալ նշում կատարելու իրավական հիմքը՝ կնիքը:

Նշվեց, որ սրա արդյունքում քաղաքացիները ստիպված չեն լինի ՀՀ-ից մեկնելու յուրաքանչյուր դեպքում այցելել ՆԳՆ միգրացիայի եւ քաղաքացիության ծառայություն՝ անձնագրում օտարերկրյա պետություններում վավերականության ժամկետի նշում (ելքի կնիք) կատարելու համար, ինչն էլ իր հերթին կթեթեւացնի անձնագրային ծառայություններում գոյացող հերթերը:

Ըստ հիմնավորման՝ առաջարկվող փոփոխությունը միջնաժամկետ լուծում է, քանի որ սույն որոշմամբ սահմանված անձնագրերը տրամադրվելու են մինչեւ բիոմետրիկ համակարգի ամբողջական ներդրումը:

ՆԳՆ փոխնախարար Արփինե Սարգսյանը նշեց, որ միայն 2021 թվականին ունեցել ենք շուրջ 500 հազար գործարք: «Ընդհանուր անձնագրային գործարքներից սա բավական մեծ տոկոս է կազմում: 2022 թվականին ունեցել ենք շուրջ 640 հազար գործարք եւ 2023 թվականի առաջին կիսամյակը, չհաշված պիկ ամառային հատվածը, արդեն 303 հազար գործարք ենք ունեցել:

Մի շատ կարեւոր հանգամանք կա պարզապես: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սա ներպետական ընթացակարգին չի վերաբերում, այլ արտաքին այլ երկրների հետ հարաբերություններին է վերաբերում, մենք սահմանել ենք Արտաքին գործերի նախարարության համար եռամսյա ժամկետ իրազեկման համար, որպեսզի օտարերկրյա պետություններն այս մեր պահանջի հանելու մասին իրազեկ լինեն, եւ մեր քաղաքացիներն օտարերկրյա պետությունների սահմանային անցման կետերում որեւէ խնդիրների այս տեսանկյունից չբախվեն: Իրազեկման այս կարեւոր կոմպոնենտով պայմանավորված՝ նախագծի՝ ուժի մեջ մտնելու ժամկետ է առաջարկվում 2024 թ. հունվարի 1-ը»,- ասաց փոխնախարարը:

Իր հերթին վարչապետ Նիկոլ Փաշինյանն ասաց. «Սա այն ինստիտուտի մասին է, որն ի սկզբանե մարդիկ կոչում էին «անձնագրի 5 հազար դրամ», որովհետեւ այն ժամանակ հնարավոր էր միայն անձնագրի այդ կնիքն ունենալ 5 տարով՝ տարին 1000 դրամ: Հետո կարգավորումները փոխվեցին, եւ այն կարելի էր ունենալ մի տարով 1100 դրամ վճարելու պարագայում:

Ի՞նչ էր տեղի ունենում. օրինակ՝ արձակուրդների սեզոնին՝ օգոստոսին եւ դեկտեմբերի վերջ, մարդիկ, որոնք պլանավորում էին երկրից դուրս գնալ, մեկ էլ հանկարծ արձանագրում էին, որ իրենց անձնագիրն օտար երկրում վավերական չէ: Միշտ այդ հարցն առաջացել է՝ ինչպես է, որ ես անձնագիր ունեմ, անձնագիրն ուժի մեջ է, բայց ինքը վավերական չէ: Այսինքն՝ տարօրինակ բան: Ես շատ ուրախ եմ, որ մենք նկատել ենք այս խնդիրը եւ ուղղում ենք:

Հիմա ՀՀ քաղաքացիները 2024 թվականի հունվարի 1-ից այլեւս որեւէ կնիք ունենալու անհրաժեշտություն չեն ունենալու: Ժամկետը պայմանավորված է նաեւ նրանով, որ մենք տասնյակ տարիներ բոլոր օտարերկրյա պետություններին իրազեկել ենք, որ եթե մեր քաղաքացու անձնագրում այդ կնիքը չկա, անձնագիրը վավեր չէ: Հիմա մենք առաջիկա ամիսների ընթացքում բոլորին պետք է տեղյակ պահենք, որպեսզի հանկարծ այնպես չլինի, որ մենք քաղաքացիներին թույլատրենք հանրապետությունից դուրս գալ, իրենք որեւէ օտար երկրում կանգնեն պրոբլեմի առաջ, եւ արդեն սկսեն հետահայաց աշխատել»:

ՀԵՏԱՔՐՔԻՐ

ՀԱՎԱՆԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

Գերմանիայում Ադրբեջանի դեսպան Նասիմի Աղաեւը հրապարակում է կատարել եւ իր ուրախությունը արտահայտել՝ այն փաստի հետ կապված, որ «Ադրբեջանն ու Հայաստանը կարող են կայուն խաղաղության հասնել»:

«Սա վճռորոշ ժամանակ է Ադրբեջանի եւ Հայաստանի, մեր ժողովուրդների համար: Շատ ուժեր չեն ցանկանում մեր զինադադարը, խաղաղ գոյակցությունն ու ընդհանուր ապագան: Միասին մենք պետք է ապացուցենք, որ այս ամենը սխալ է, եւ ցույց տանք, որ ադրբեջանցիներն ու հայերը կարող են եւս մեկ անգամ միասին ապրել եւ զարգանալ Ղարաբաղում:

Ադրբեջանն ու Հայաստանը կարող են հասնել կայուն խաղաղության եւ կարգավորել իրենց հարաբերությունները: Վստահ եմ, որ մենք կարող ենք դա անել»,- գրել է ադրբեջանցի դիվանագետը:

ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԱՍԿԱԾԻ ՏԱԿ

Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովն անդրադարձել է մի շարք պատգամավորների այն հայտարարություններին, թե, իբր, սանկցիաներ պետք է կիրառել Ադրբեջանի նկատմամբ:

«ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը միջազգային հանրությանը մոլորեցնելու իր արշավում օգտագործում է Հայաստանի փորձը, որը ողբալի է: Մենք, օգտվելով առիթից, եւս մեկ անգամ տեղեկացնում ենք խորհրդին եւ միջազգային հանրությանը տարածաշրջանային խաղաղության եւ անվտանգության համար Հայաստանի կողմից առաջադրվող մարտահրավերների մասին: Խորհրդի նման անխոհեմ չարաշահումը եւս մեկ անգամ բացարձակապես անթույլատրելի է, լուրջ հարված է այս մարմնի հեղինակությանը»,- նշել է նա:

Նախարարը հավելեց. «Այսօր Ադրբեջանի Եվլախ քաղաքում տեղի է ունեցել Ադրբեջանի կառավարության հատուկ ներկայացուցչի հանդիպումը հայ բնակիչների ներկայացուցիչների հետ: Հանդիպման հիմնական նպատակն է քննարկել ենթակառուցվածքների վերականգնման ու շահագործման հետ կապված հարցեր»:

Ադրբեջանական կողմը պնդում է, որ նախկինում երկխոսությունը կողմերի միջեւ անհնար էր հայկական կողմի խոչընդոտման պատճառով:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

«ԱԶՆԱՎՈՒՐ» ՔՈԼԵՋՆ ՈՒ ԴԱՍԱԴՈՒԼԸ

Երեւանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի եւ արվեստի պետական քոլեջի տնօրեն Վրեժ Կիրակոսյանը պարզաբանում է տարածել երեկ Հանրապետության հրապարակում ընթացող հանրահավաքներին քոլեջի ուսանողների մասնակցության շուրջ լուրերի առնչությամբ:

Նա, մասնավորապես, նշել է. «Նախ ես՝ որպես հայ, մտահոգված եմ ցանկացած իմ հայրենակցի, ազգի ներկայացուցչի ճակատագրով՝ կլինի Հայաստանում, Արցախում, թե սփյուռքում: Ինձ համար բոլորն էլ թանկ են ու իմ արյունակիցներն են, առավել քան այսօր, երբ Արցախի հայությունը գտնվում է ամենածանր իրավիճակում, եւ նրանց կարգավիճակն օրհասական է ու աղետալի: Ես՝ որպես հայ, մտահոգված եմ եւ իրապես անելանելի իրավիճակում եմ հայտնվել, ինչպես այսօր իմ բոլոր հայրենակիցները:

Ինչ վերաբերում է ուսումնական հաստատության հետ կապված շրջանառվող լուրերին, ապա, որպես ուսումնական հաստատության ղեկավար, ես պարտավոր եմ ի պաշտոնե պահպանելու ուսումնական հաստատության ապաքաղաքական կարգավիճակը:

Ես ունեմ իմ քաղաքական հայացքները, բայց դրանք ես իրավունք չունեմ ո՛չ ստիպելու, ո՛չ ներկայացնելու, ո՛չ հանրայնացնելու իմ ուսանողների շրջանում, քանզի ես զբաղվում եմ կրթությամբ: Քոլեջում չկա մի ուսանող, որ կարող է ասել, թե ես երբեւիցէ խոսել կամ խոսում եմ իմ քաղաքական հայացքների մասին, կամ էլ, առավել եւս, իմ գաղափարներն եմ պարտադրում կամ սերմանում:

Ինչ վերաբերում է այսօրվա հանրահավաքին, ապա ասեմ՝ առավոտյան երբ ես եկա աշխատանքի, ուսանողները հավաքված էին քոլեջի մուտքի մոտ: Մոտեցա նրանց, ինձ դիմավորեցին «Արցախը Հայաստան է» գրությամբ պաստառներով եւ հարցերցին. «Պարոն Կիրակոսյան, ինչպե՞ս կարտահայտվեք»: Պատասխանս եղավ՝ այո, Արցախը ինձ համար Հայաստան է, ինչպես յուրաքանչյուր հայի համար:

Ինչ վերաբերում է նրանց դասին չներկայանալուն եւ հանրահավաքներին մասնակցելուն, ես նրանց տեղեկացրել եմ, որ չներկայանալու դեպքում կստանան բացակա: Իսկ այն հարցին, թե իրենք պետք է գնան մասնակցեն, թե ոչ, ես պատասխանեցի՝ դուք անչափահաս եք, եւ մենք ձեր եւ ձեր անվտանգության համար պատասխանատվություն ենք կրում: Եթե չեք ներկայանալու դասի եւ պատրաստվում եք լքել ուսումնական հաստատությունը, ապա դրա մասին մենք պետք է տեղեկացնենք ձեր ծնողներին, քանի որ նրանք ձեզ ճանապարհել են ուսումնական հաստատություն՝ դասի:

Այդ երեխաները, որպես անչափահաս, կարող են հայտնվել բազմության մեջ, որտեղ ամեն տեսակի վտանգ կարող է լինել, իսկ ուսումնական հաստատությունը, ինքս՝ որպես ուսումնական հաստատության տնօրեն, իրենց ծնողների հետ կիսում ենք նրանց կյանքի անվտանգ առօրյան կազմակերպելու գործը: Ի դեպ, այդ մասին անմիջապես տեղեկացրել եմ նաեւ ՀՀ ԿԳՄՍՆ-ին:

Խնդրում եմ եւ պահանջում չքաղաքականացնել ոչինչ՝ «Ազնավուր» քոլեջի անվան հետ կապված, ինչպես նաեւ չօգտվել ստեղծված իրավիճակից, չքաղել դիվիդենտներ եւ այլ մեկնաբանություններ չանել: Այս պահին քոլեջն աշխատում է բնականոն հունով:

Ես հայ եմ, իմ հայրենիքը Հայաստանն է, իսկ Արցախն ինձ համար Հայաստան է»:

ՍՊՈՐՏ

ՄԵՍԻԻ ՆՊԱՏԱԿԸ

Աշխարհի չեմպիոն Արգենտինայի հավաքականի եւ ամերիկյան «Ինտեր Մայամիի» 36-ամյա հարձակվող Լիոնել Մեսին մտադիր է մասնակցել հաջորդ տարի ԱՄՆ-ում անցկացվելիք Ամերիկայի գավաթին:

«Աշխարհի առաջնության մասին չեմ մտածում, քանի որ դեռ շատ ժամանակ կա, իսկ Ամերիկայի գավաթի մասին մտածում եմ: Նպատակս է մասնակցել ԱՄՆ-ում Ամերիկայի գավաթին:

Մենք այստեղ արդեն մեկ անգամ մասնակցել ենք Ամերիկայի գավաթի. հրաշալի էր: Թեեւ եզրափակիչում պարտվեցինք, բայց ստադիոնները, մթնոլորտը, ուղեւորությունները շատ հավանեցինք»,- Մեսիի խոսքը մեջբերում է AS-ը:

Ամերիկայի գավաթը տեղի կունենա 2024թ. հունիս-հուլիսին: Կմասնակցի 10 հարավամերիկյան եւ 6 հյուսիսամերիկյան հավաքական:

150–ՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Երեւանի «Ալաշկերտի» եւ Հայաստանի հավաքականի դարպասապահ Օգնյեն Չանչարեւիչը Հայաստանի առաջնություններում անցկացրել է 150-րդ հանդիպումը՝ մասնակցելով Երեւանի «Արարատի» դեմ Պրեմիեր լիգայի 8-րդ տուրի հանդիպմանը. հաղորդում է մրցաշարի մամուլի ծառայությունը:

«Ալաշկերտն» այդ խաղում հաղթել է 2:1 հաշվով:

Վսեւոլոդ Երմակովից (156 խաղ) հետո Չանչարեւիչը դարձավ Հայաստանի առաջնություններում 150 խաղի սահմանագիծը հատած այլազգի երկրորդ դարպասապահը:

Հայաստանի ազգային հավաքականի դարպասապահը Պրեմիեր լիգայում առավել շատ հանդիպումների մասնակցած սերբ ֆուտբոլիստն է:

ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՐԿԱՐԱՁԳԵՑ

Լոնդոնի «Արսենալը» երկարաձգեց պայմանագիրը 24-ամյա նորվեգացի կիսապաշտպան Մարտին Էդեգորի հետ. հաղորդում է անգլիական ակումբի մամուլի ծառայությունը: Նոր պայմանագիրը նախատեսված է մինչեւ 2028թ. հունիս:

Էդեգորը չորրորդ մրցաշրջանն է անցկացնում «Արսենալում» 2021թ. հունվարին Մադրիդի «Ռեալից» վարձակալությամբ տեղափոխվելուց հետո: Անցած մրցաշրջանում Էդեգորը Անգլիայի Պրեմիեր լիգայում խփել էր 15 գոլ՝ ճանաչվելով ակումբի լավագույն խաղացող:

Transfermarkt-ը Էդեգորի տրանսֆերային արժեքը գնահատում է 90 միլիոն եվրո:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՊԱՅՔԱՐՈՒՄ ԵՆ ԸՄԲԻՇՆԵՐԸ

Սերբիայի մայրաքաղաք Բելգրադում անցկացվող հունահռոմեական ոճի ըմբշամարտի աշխարհի առաջնությունում սեպտեմբերի 22-ին տեղի ունեցավ 72 կգ, 60 կգ, 97 կգ քաշային կարգերի գոտեմարտերը: Հայաստանի հավաքականից պայքարի մեջ կմտնեն Գեւորգ Ղարիբյանը (60 կգ), Շանթ Խաչատրյանը (72կգ) եւ Արթուր Ալեքսանյանը (97 կգ):

2020 թվականի Եվրոպայի չեմպիոն Գեւորգ Ղարիբյանը մեկնարկային 1/16 եզրափակիչում մրցեց կրկնակի օլիմպիական չեմպիոն Արմեն Նազարյանի որդու՝ աշխարհի փոխչեմպիոն, Եվրոպայի կրկնակի չեմպիոն, Բուլղարիան ներկայացնող Էդմոնդ Նազարյանի հետ:

Մ23 աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր Շանթ Խաչատրյանը (72կգ) որակավորման փուլում ուժերը չափեց չեզոք երկրների դրոշի ներքո հանդես եկող ռուսաստանցի Նարեկ Օհանյանի հետ:

Օլիմպիական խաղերի ոսկե, արծաթե եւ բրոնզե մեդալակիր, աշխարհի քառակի եւ Եվրոպայի 6-ակի չեմպիոն Արթուր Ալեքսանյանը (97կգ) պայքարի մեջ մտավ 1/16 եզրափակիչից, որտեղ կմրցի Եվրոպայի փոխչեմպիոն, ռումինացի Նիկու Օժոգի հետ:

Երեկոյան մրցահերթում բրոնզե մեդալի գոտեմարտ անցկացրեց աշխարհի չեմպիոն, Եվրոպայի կրկնակի եւ գործող չեմպիոն Մալխաս Ամոյանը (77կգ): Մրցակիցը հայտնի կդառնա սփոփիչ գոտեմարտերից հետո: Մալխաս Ամոյանը կպայքարի նաեւ Փարիզի օլիմպիական խաղերի ուղեգիր:

Առաջին մրցումային օրը պայքարի մեջ մտած Ռուդիկ Մկրտչյանը (55կգ), Մաքսիմ Մանուկյանը (82 կգ) եւ Դավիթ Օվասապյանը (130 կգ) պարտվել են:

Հիշեցնենք, որ աշխարհի առաջնությունը ըմբիշների առաջին օլիմպիական վարկանիշային մրցաշարն է: Յուրաքանչյուր օլիմպիական քաշային կարգում խաղարկվելու է 5 ուղեգիր՝ 4 մեդալակիրները եւ բրոնզե մեդալի համար գոտեմարտում պարտված 2 ըմբիշներից մեկը. նրանց միջեւ կանցկացվի լրացուցիչ գոտեմարտ:

Հունահռոմեականների օլիմպիական քաշային կարգերն են՝ 60 կգ, 67 կգ, 77 կգ, 87 կգ, 97 կգ եւ 130 կգ:

Հունահռոմեական ոճի ըմբշամարտի աշխարհի առաջնությունը կավարտվի սեպտեմբերի 24-ին:

● *Սեպտեմբերի 23-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Վերջին կանգառ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ:*

ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ աջակցության ծրագրեր է իրականացնում Էկոնոմիկայի նախարարությունը անասնաբուծության ոլորտում:

Աննա Գալեյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Նախարարության կողմից անասնաբուծության ոլորտի զարգացման նպատակով իրականացվում են հետեւյալ ծրագրերը.

- «Հայաստանի Հանրապետությունում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման» ծրագիր, որով նախատեսվում է 2% տարեկան տոկոսադրույքով սուբսիդավորվող վարկով ձեռք բերել բարձր մթերատու տոհմային խոշոր եղջերավոր կենդանիներ,
- «Հայաստանի Հանրապետությունում 2019-2023 թվականների ոչխարաբուծության եւ այծաբուծության զարգացման պետական աջակցության» ծրագիրը, որի 1-ին բաղադրիչով նախատեսվում է 2% տարեկան տոկոսադրույքով սուբսիդավորվող վարկով ձեռք բերել բարձր մթերատու տոհմային մանր եղջերավոր կենդանիներ, իսկ 2-րդ բացադրիչից օգտվելու դեպքում կփոխհատուցվի շահառուի կողմից յուրաքանչյուր գլուխը մինչեւ 450 հազար ՀՀ դրամ արժեքով ձեռք բերված տոհմային մատղաշի համար փաստացի վճարված գումարի (չհաշված տեղափոխման ծախսերը) 23 %-ը,
- «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագիրը, որի շրջանակներում խոզաբուծությամբ եւ թռչնաբուծության նպատակով տրամադրվող վարկերը տնտե-սա-վարողներին տրամադրվում են 0 % տոկոսա-դրույքով, մինչեւ 3 տարի մարման ժամկետով, մինչեւ 12 ամիս վարկի մայր գումարի արտոնյալ ժամկետով:

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նախարարության կողմից անասնաբուծության ոլորտի զարգացման նպատակով իրականացվում է նաեւ «Փոքր եւ միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման եւ դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» ծրագիրը, որի շրջանակում պետությունը փոխհատուցում է «խելացի» անասնաշենքերի կառուցում կամ վերակառուցում իրականացրած շահառուների ծախսերը:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ աջակցության ծրագրեր է իրականացնում նախարարությունը անասնաբուծության ոլորտում:

Վարդան Արսենյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Այս տարի նախարարությունը մեկնարկել է երկու ծրագիր՝ ուղղված անասնաբուծության ոլորտի զարգացմանը. դրանք են «Փոքր եւ միջին «խելացի» անասնաշենքների կառուցման կամ վերակառուցման եւ դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» եւ «ՀՀ-ում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման» ծրագրերը: Առաջին ծրագրի շրջանակում պետությունը փոխհատուցում է «խելացի» անասնաշենքերի կառուցում կամ վերակառուցում իրականացրած շահառուների ծախսերը:

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Երկրորդի դեպքում հնարավորություն է ընձեռվում ընդամենը 2% տարեկան տոկոսադրույքով սուբսիդավորվող վարկով ձեռք բերել բարձր մթերատու տոհմային խոշոր եղջերավոր կենդանիներ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Սեպտեմբերի 22-ին տեղի ունեցավ ՄԱԿ ԱԽ նիստը: Նիստի ժամանակ քննարկվել է Արցախում տիրող իրավիճակը: Նիստի մեկնարկին սոցիալական ցանցի իր էջում լուսանկար էր տեղադրել ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Արփի Դավոյանը: Այդ լուսանկարում նաեւ նույն խմբակցության պատգամավորներ Լուսինե Բադալյանն ու Նարեկ Զեյնալյանն են: Այս լուսանկարը ՔՊ-ի ներսում քննարկումների առիթ է դարձել: Անգամ նույն Դավոյանի լուսանկարի տակ նրանց ներկայության հետ կապված մեկնաբանություններ են առկա: Բանն այն է, որ Լուսինե Բադալյանն ու Նարեկ Զեյնալյանը գրեթե միշտ գործուղումների են մեկնում միասին: Այս անգամ ավելի շատ քննարկման թեմա է դարձել այն հարցը, թե ինչու են հենց այս պատգամավորները գնացել նման քննարկման: Ի վերջո, այսքան կարեւոր քննարկմանը տրամաբանական կլիներ, եթե մասնակցեին արտաքին քաղաքականության ոլորտը ներկայացնող մարդիկ, այլ ոչ թե մեկնեին պարզապես շրջագայության:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

2011 Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Մարզ	Ջերմաստիճան	Մարզ	Ջերմաստիճան
Շիրակ	+4 +9 / +19 +24	Արարատ	+12 +14 / +25 +28
Կոտայքի լեռներ	+3 +7 / +19 +23	Արմավիր	+9 +12 / +25 +27
Կոտայքի նախալեռներ	+11 +13 / +22 +24	Վայոց ձորի լեռներ	+3 +7 / +19 +21
Գեղարքունիք	+4 +8 / +16 +21	Վայոց ձորի նախալեռներ	+10 +13 / +25 +28
Լոռի	+5 +9 / +15 +20	Սյունիքի հովիտներ	+9 +13 / +20 +24
Տավուշ	+7 +12 / +19 +22	Սյունիքի նախալեռներ	+9 +13 / +20 +24
Արագածոտնի լեռներ	+3 +6 / +18 +21	ԼՂՀ	+9 +13 / +20 +24
Արագածոտնի նախալեռներ	+10 +13 / +22 +27	Երեւան	+13 +15 / +25 +27

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **22.9.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*